Նախագիծ

Լրամշակված տարբերակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության պետական գույքի 2017-2020 թվականների մասնավորեցման նպատակները

1. Հայաստանի Հանրապետության պետական գույքի (այսուհետ՝ պետական գույք) մասնավորեցման **2017-2020** թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակված է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան և նպատակաուղղված է սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններով սահմանված խնդիրների լուծմանը:

2. Պետական գույքի մասնավորեցման ոլորտում 2017-2020 թվականների պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) երկրի տնտեսության մրցունակության և արդյունավետության խթանում,

2) ընկերությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և մրցակցային միջավայրի բարելավումը,

3) մասնավորեցման ենթակա օբյեկտի (ընկերության) արդյունավետ սեփականատիրոջ կամ ներդրողի ընտրությունը՝ վերջինը երաշխավորող և միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող մասնավորեցման ձևերի և գործիքակազմի (մրցույթ, ներդրումային ֆոնդերի ներգրավում, ուղղակի վաճառք և այլն) օգտագործմամբ,

4) երկրի ՀՆԱ-ի ձևավորման մեջ մասնավոր կապիտալի տեսակարար կշռի ավելացում և մասնավորեցման քաղաքականության շարունակականության ապահովում,

5) պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացումը:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝ մասնավորեցման նախորդ ծրագրեր՝ «Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների

սեփականաշնորհման և ապապետականացման 1994 թվականի ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը, «Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1995 թվականի ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 1995 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, «Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1996-1997 թվականների ծրագրի մասին», «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին», և «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

2. Սույն օրենքում օգտագործվում են նաև «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունները:

Հոդված 3. Մասնավորեցվող պետական գույքի ընտրության սկզբունքները

1. Ծրագրում ընդգրկված՝ մասնավորեցվող պետական գույքի ընտրության սկզբունքներն են՝

1) պետական մասնակցությամբ կազմակերպությունների ոչ արդյունավետ կառավարումը,

2) պետական մասնակցությամբ ընկերությունների ոչ մրցունակ լինելը,

3) համապատասխան ոլորտում հանրության կարիքների լիարժեք կառավարումն ապահովելու տեսանկյունից բավարար քանակի ոչ պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված պետական մասնակցությամբ ընկերությունների վերապահված պարտավորությունների կարևորության մակարդակի նվազումը,

4) պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասով) այն առևտրային ընկերությունների մասնավորեցումը, որոնք անհրաժեշտ չեն պետական գործառույթների իրականացման համար:

Հոդված 4. Տնտեսության այն ճյուղերը և ոլորտները, որոնցում մասնավորեցում չի նախատեսվում

1. Սույն ծրագրի համաձայն մասնավորեցման ենթակա չեն՝

1) քաղաքացիական պաշտպանության և մոբիլիզացիոն նշանակության օբյեկտները, ռազմական կառույցները.

2) քարտեզագրության, երկրաբաշխության, հիդրոօդերևութաբանության ոլորտների, ինչպես նաև շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի պահպանումն իրականացնող՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները.

3) պետական ռեզերվների և մոբիլիզացիոն պաշարների պահեստային տնտեսության օբյեկտները.

4) ստանդարտացման և չափագիտության ծառայություններ մատուցող՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները.

5) միջպետական և հանրապետական նշանակության երկաթուղիները և ավտոճանապարհները, Երևանի մետրոպոլիտենը, գնացքների երթևեկության և օդային թռիչքների անվտանգությունն ապահովող ծառայությունները, զորային տիպի ավտոշարասյուները.

6) պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

2. Մասնավորեցման ենթակա օբյեկտների զբաղեցրած տարածքները չեն մասնավորեցվում, և դրանք առանձնացվում են մասնավորեցվող գույքի կազմից, եթե տվյալ օբյեկտները տեղաբաշխված են՝

1) ինժեներատեխնիկական կառույցներում, հաղորդակցության ուղիներում (կամուրջներ, թունելներ, պատնեշներ, ստորգետնյա անցումներ և այլն) և ինժեներատեխնիկական առումով դրանց մասը համարվող կից տարածքներում, երկաթուղային կայարաններում, սոցիալական և մշակութային ոլորտի օբյեկտներում (ուսումնական հաստատություններ, մշակութային օբյեկտներ).

2) պաշտպանական և անվտանգության նշանակություն ունեցող օբյեկտներում և դրանց կից տարածքներում:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերում, երբ տվյալ տարածքի մասնավորեցումը չի թույլատրվում, այն կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վարձակալական հիմունքներով:

Հոդված 5. Պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները, անավարտ շինարարության և «փոքր» օբյեկտները, որոնց մասնավորեցումն իրականացվում է ծրագրով

1. Սույն ծրագրի մաս են կազմում՝ հավելված 1-ը ՝<<2017-2020 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների, մասնավորեցման օբյեկտների (այդ թվում՝ մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված)> ցանկը:

2. Մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները, «փոքր» և անավարտ շինարարության օբյեկտները համարվում են սույն ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված ձևերով:

3. Սույն ծրագրի մաս են կազմում դատական կարգով անվավեր ճանաչված մասնավորեցման գործարքների առարկաները՝ մասնավորեցման օբյեկտները: Ծրագրում ընդգրկված օբյեկտների մասնավորեցման գործարքների՝ դատարանի կողմից անվավեր ճանաչվելու արդյունքում գնորդներին հետ վերադարձման ենթակա գումարները փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին, ,իսկ դրանց անբավարարության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

4. Սույն ծրագրի մաս է հանդիսանում մասնավորեցման նախապատրաստման աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) որոշումներով ստեղծված ընկերությունները և առանձնացված գույքի տարրերը:

5.Ծրագրի մաս են կազմում նաև մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում առանձին ծածկագրով չընդգրկված «փոքր» և անավարտ շինարարության օբյեկտները՝ դրանց սեփականատեր հանդիսացող պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց գույքի կազմից առանձնացվելուց հետո:

Հոդված 6. Սեփականաշնորհման սերտիֆիկատների օգտագործումը

1. Սույն ծրագրով սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկում չի իրականացվում:

Հոդված 7. Պետական գույքի մասնավորեցման տարաժամկետ վճարումները

1. Պետական գույքի մասնավորեցման տարաժամկետ վճարումների սանդղակը կիրառվում է «փոքր» օբյեկտների ու վարձակալած գույքի մասնավորեցման դեպքում և մասնավորեցման նախորդ ծրագրերով տարաժամկետ վճարման իրավունք ստացած սուբյեկտների նկատմամբ:

2. «Փոքր» օբյեկտների և վարձակալած գույքի մասնավորեցման դեպքում տարաժամկետ վճարումների սանդղակը ներկայացված է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2 -ում:

3. Պետական գույքի մասնավորեցման տարաժամկետ վճարման դեպքում յուրաքանչյուր հերթական վճարումից հետո օբյեկտի արժեքի մնացած մասը վճարվում է հավասար մասերով՝ տարին մեկ անգամ: Հերթական վճարման ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվի է առնվում գնահատման պահի և վճարման պահերի՝ ԱՄՆ-ի դոլարի և հայկական դրամի փոխարժեքների հարաբերությունը: Գնորդը ցանկացած ժամանակ կարող է վճարել մնացած ամբողջ արժեքը կամ դրա մասը:

4. Մասնավորեցված օբեկտի գնորդի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման

պահից, սակայն այդ գույքը համարվում է գրավադրված մինչև գույքի արժեքի լրիվ վճարման պահը: Ընդ որում, գույքը գնորդի կողմից կարող է օտարվել բացառապես այն պայմանով, երբ նոր գնորդը ստանձնում է օբյեկտի գնի մնացորդի վճարման պարտավորությունը նույն պայմանով, և գրավի իրավունքը պահպանվում է մինչև գույքի արժեքի լրիվ վճարման պահը:

5. Պետական գույքի մասնավորեցման առանձին դեպքերում (բացառությամբ «փոքր» օբյեկտների և վարձակալած գույքի մասնավորեցման դեպքերի) կառավարությունն իրավասու է սահմանելու տարաժամկետ վճարումների իրականացման այլ համամասնություններ և ժամանակացույց:

Հոդված 8. Առողջապահության ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների մասնավորեցմանը ներկայացվող պահանջները

1. Սույն ծրագրի մաս հանդիսացող հավելված 1-ում ընդգրկված առողջապահական ընկերությունների մասնավորեցումը չի կարող հանգեցնել այդ ընկերությունների գործունեության հիմնական ուղղության կամ հանրային նշանակության փոփոխությանը կամ որևէ կերպ նվազեցնել դրանց գործունեության հանրային օգտակարությունը (այդ թվում, մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մրցունակության ապահովման առումով):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջը ամրագրվում է տվյալ պետական մասնակցությամբ ընկերության մասնավորեցման պայմանագրում, որպես գործարքի շրջանակներում ՀՀ կառավարության և մասնավոր սեփականատիրոջ կամ ներդրողի իրավատնտեսական հարաբերությունների կարգավորման գլխավոր նախապայման: Վերջինս պահպանում է իր իրավական ուժը ընկերության գործունեության ամբողջ ընթացքում՝ անկախ սեփականատիրոջ փոփոխությունից:

Հոդված 9. Մասնավորեցման համար անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները՝ ըստ առանձին ընկերությունների

1. Մասնավորեցում իրականացնող՝ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին) կազմում է պետական գույքի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների բովանդակության վերաբերյալ առաջարկ: Նախապատրաստական աշխատանքների բովանդակությունը, ժամկետը և իրականացնող մարմինը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ընդ որում՝

1) լիազորված մարմնի կազմված կարգով Հայաստանի Հանրապետության նախարարությունները, պետական կառավարման մյուս և տարածքային կառավարման մարմինները տեղեկություններ են տրամադրում մասնավորեցման գործընթացում ներգրավված իրենց համակարգի պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների ֆինանսական

վիճակի, ինչպես նաև առաջարկություններ՝ ընկերության պարտքերի վերակառուցման վերաբերյալ:

2) կարող են հրավիրվել նաև մասնագիտացված աուդիտորական կազմակերպություններ, որոնց հիմնական նպատակն է մասնավորեցվող օբյեկտների ակտիվների և պասիվների չափի ճշգրտումը, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության ստուգումը և այլն.

3) անհրաժեշտության դեպքում ստեղծվում են փորձագետների ժամանակավոր խմբեր, կամ հրավիրվում են անկախ փորձագետներ և խորհրդատուներ, որոնց միջոցով մշակվում են հանձնարարականներ՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները վերակազմակերպելու (միաձուլելու, միացնելու, բաժանելու, առանձնացնելու, վերակազմավորելու) ուղղությամբ:

Հոդված 10. Մասնավորեցման գործընթացում ներգրավված ընկերությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների իրավասությունների սահմանափակումները

1. Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմիններն իրավունք չունեն ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո դրանում ընդգրկված՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունները լուծարելու կամ վերակազմակերպելու (միաձուլելու, միավորելու, բաժանելու, առանձնացնելու, վերակազմավորելու), բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինները պարտավոր են սույն հոդվածի առաջին մասում նշված ընկերություններին թույլ չտալ իրականացնելու ոչ համարժեք կամ զեղչ գներով խոշոր գործարքներ:

3. Ծրագրում ընդգրկված՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով ընկերությունների մասնավորեցում իրականացնող լիազորված մարմնին են փոխանցվում ընկերության՝ պետությանը պատկանող բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները, եթե մասնավորեցման մասին կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Ծրագրում ընդգրկված պետական գույքի նկատմամբ այլ սահմանափակումները կարող են սահմանվել սույն օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով:

Հոդված 11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական միջոցառումները

1. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական միջոցառումներն են՝

1) հասարակությանը և հավանական ներդրողներին «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, պետական գույքի մասնավորեցման մասին կառավարության համապատասխան որոշումներին և այլ նորմատիվ իրավական ակտերին ծանոթացնելու գործընթացը կազմակերպելը.

2) մասնավորեցման նշանակալի գործարքների մասին հավանական ներդրողներին տեղեկացնելու գործընթացը կազմակերպելը և նրանց հետ բանակցություններ վարելը.

3) մասնավորեցման գործընթացում ներգրավված կադրերի համար մեթոդական և գործնական ուսուցում կազմակերպելը.

4) մասնավորեցում իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում մասնավորեցման և լուծարման գործընթացներում խորհրդատվական ընկերություններ ու փորձագետներ ներգրավելը.

5) մասնավորեցում իրականացնող լիազորված մարմնի հիմնարկներին և կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտության դեպքում տեխնիկական և ֆինանսական աջակցությունը:

Հոդված 12. Օրենքի ուժի մեջ մտնելը

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված 1

ՑԱՆԿ
2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՆԱԽՈՐԴ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ)

Հ/Հ	Ծածկա-գիրը	Ընկերության (օբյեկտի) անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3	5
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն			
1.	90100	<<Ագրոսպասարկում>> ՓԲԸ	քաղ.Երևան, Տ. Մեծի 65ա
2.	61129	Գորիսի <<Բերրիություն>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Գորիս, Ամառանոցային 125
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն			
3.	90101	<<Կրթության ազգային ինստիտուտ> ՓԲ ընկերության <Տավուշի ուսուցիչների վերապատրաստման կենտրոն>> ԴՓԲԸ	քաղ.Իջևան, Սպիտակ լճեր
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն			
4.	90073	<< Հայփոստ>> ՓԲԸ	քաղ. Երևան, Սարյան 22
5.	90117	<<Հայավտոկայարան>> ՓԲԸ	Կոտայքի մարզ, Երևան-Սևան մայրուղի N 2/14
Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն			
6.	6112	Տաշիրի կինոցանցի գույք	Լոռու մարզ քաղ. Տաշիր, Վ.Սարգսյան փող., թաղ. 4, թիվ36/1
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն			
7.	90102	<<Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ>> ՓԲԸ	քաղ.Երևան, Օրբելի 41
8.	90103	<<Համո Բեկնազարյանի անվան <<Հայֆիլմ>> կինոստուդիա>> ՓԲԸ	քաղ.Երևան, Աշտարակի խճուղի 30
9.	90104	<<Սևակ և Սաթինե>> ՍՊԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երեւան, Արղության 10
10.	90074	<<Ավտոմատիկա>> ՓԲԸ –ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Թևոսյան 3/1
11.	90105	<<Ընդունելությունների տուն>> ՓԲԸ	քաղ.Երևան,

Հ/Հ	Ծածկա-գիրը	Ընկերության (օբյեկտի) անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3	5
			Մաշտոցի 47
12.	90051	<<Հրազդանի մարզահամալիր>> ՓԲԸ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճ 4
13.	90057	<<Ձիասպորտի կենտրոն>> ՓԲԸ	քաղ. Երևան, Շիրակի 39
14.	21876	<<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Արշակունյաց 12
15.	21805.1	<<Կապուտակ>> ՓԲԸ	Գեղարքունիքի մարզ, քաղ.Սևան , Առափնյա գոտի
16.	74593	<<Հայառշինվերանորոգում-1>> ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Գլինկայի 7
17.	74730	<<Երառսպասարկում>> ՓԲԸ	քաղ. Երևան, Խորենացու փ.26ա
18.	60347	<<Երևանի ջրամատակարարման ուղեմաս>> ԲԲԸ	քաղ. Երևան, Արցախի 40
19.	62132	<<Գեոէկոնոմիկա>> ՓԲԸ	քաղ. Երևան, Կոմիտասի 49
20	62130	<<Ընդերքաբան>> ԲԲԸ	քաղ. Երևան, Չարենցի 46
21.	20370	<<Բյուրեղ>> հանքային ջրերի գործարան>> ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Կոտայքի մարզ, գ.Բջնի
22.	62308	<<Իջևանի <<Ագրոսպասարկում>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Տավուշի մարզ, գ. Աչաջուր
23.	61110	<<Ախուրյանի <<Ագրոսպասարկում>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Շիրակի մարզ, գ.Ախուրյան, Ախուրյան խճուղի
24.	61100	<<Անիի <<Ագրոսպասարկում>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Շիրակի մարզ, գ. Մարալիկ
25.	61138	<<Վարդենիսի <<Բերրիություն>> ԲԲԸ –ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Վարդենիս, Չարենցի փող.
26	21843	<<Դվին կոնցեռն>> ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Արշակունյաց 67
27.	62127	<<Ջրհան>> ՓԲԸ	Արմավիրի մարզ, գ. Գեղակերտ
28	62021	<<Արաքս>> ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Գ.Նժդեհի 37/8

Հ/Հ	Ծածկա-գիրը	Ընկերության (օբյեկտի) անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3	5
29	90038	<<Երվերելակ>> ՓԲԸ	քաղ. Երևան, Մասիսի նրբ. թիվ 13
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե			
30	90106	<<Միջուկային և ռադիացիոն անվտանգության ԳՏԿ>> ՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 4
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն			
31.	90107	<<Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն >> ՓԲԸ	քաղ.Երևան, Ֆանարջյան 76
32	90108	<<Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն>> ՓԲԸ	քաղ. Երևան, Նորք-Մարաշ 9փ, 123
33	90109	<<Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն>> ՓԲԸ	քաղ. Երևան, Դավթաշեն, փ/ա 25
34	90110	<<Մաշկաբանության և սեռավարակաբանական բժշկագիտական կենտրոն>> ՓԲԸ	քաղ. Երևան, Ֆուչիկի 32
35	90111	<<Օշական>> մանկական վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ	Արագածոտնի մարզ, գ.Օշական
36	90112	<<Դիլիջան>> մանկական հակատուբերկուլյոզային առողջարան>> ՓԲԸ	քաղ. Դիլիջան , Օրջոնիկիդզե 5-րդ նրբ., տ.1
37	90113	<<Երևանի երկաթուղու պոլիկլինիկա>> ՓԲԸ	քաղ.Երևան Արցախի 8բ
38	90114	<<Նևրոզների կլինիկա>> ՓԲԸ	Կոտայքի մարզ, գ.Քասախ, Ռ.Սաֆարյան 10
39	90115	<<Հանրապետական անձավաբուժական կենտրոն>> ՓԲԸ	քաղ.Երևան, Աճարյան 2, փակուղի 4
40	90116	<<Արաբկիր>> բժշկական համալիր-երեխաների եվ դեռահասների առողջության ինստիտուտ>> ՍՊԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	քաղ. Երևան, Մամիկոնյանց 30
41.	90075	<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ	քաղ. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն			
42	90118	<<Գյուկոնդ>> ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Շիրակի մարզ, քաղ.Գյումրի, Խանջյան 1
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն			
43	90119	<<Արտակարգ իրավիճակների օդանավակայան>> ՓԲԸ	քաղ.Ստեփանավան
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն			
44	90120	<<Ծաղկաձորի գլխավոր	Կոտայքի մարզ,

Հ/Հ	Ծածկա-գիրը	Ընկերության (օբյեկտի) անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3	5
		մարզահամալիր>> ՓԲԸ	քաղ.Ծաղկաձոր
45	90121	<<Հավաքական թիմերի մարզական կենտրոն>> ՓԲԸ	քաղ.Երևան, Ծիծեռնակաբերդ 5, Սպորտ-Ավան
Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն			
46	90122	<<Էներգաիմպեքս>> ՓԲԸ	քաղ.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
Գեղարքունիկի մարզպետարան			
47.	90123	<<Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> ՓԲԸ	քաղ. Վարդենիս, Երիտասարդության փող. 15

Հավելված 2

«ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ և ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏԱՐԱԺԱՄԿԵՏ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿԸ

Գնահատված արժեքը (դրամով)	Առաջին վճարի չափը (գնահատված արժեքի նկատմամբ՝ տոկոսով)	Վճարման ժամկետը (տարիներով)	Վճարումների թիվը (անգամ)
Մինչև 500.000	100	-	-
500.001-1.000.000	50	1	2
1.000.001-1.500.000	40	2	3
1.500.001-2.000.000	35	3	4
2.000.001-3.000.000	30	4	5
3.000.001-4.000.000	25	5	6
4.000.001-5.000.000	25	6	7
5.000.001-6.000.000	25	7	8
6.000.001-7.000.000	20	8	9
7.000.001-8.000.000	20	9	10
8.000.001-9.000.000	20	10	11
9.000.001-10.000.000	20	11	12
10.000.001-11.000.000	20	12	13
11.000.001-12.000.000	20	13	14
12.000.001-13.000.000	20	14	15
13.000.001-14.000.000	20	15	16
14.000.001-15.000.000	20	16	17
15.000.001-16.000.000	20	17	18
16.000.001-18.000.000	20	18	19
18.000.001-20.000.000	20	19	20
20.000.001-ից ավելի	20	20	21

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 06.06.2017թ. ԵՎ 07.06.2017թ. ՆԻՍՏԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» (Կ-014-02.06.2017-ՏՀ-011/0) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության փոփոխության (լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջրկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	‹‹Պետական գույքի կառավարման 2017-2020 թվականների ծրագրի մասին ՀՀ օրենքի նախագծի հոդված 1-ի 2-րդ կետ	Նախագծի նշված մասում ավելացնել նոր 2.1 ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ 1) երկրի տնտեսության մրցունակության և արդյունավետության խթանում	Առաջարկությունը ընդունելի է, կատարվել է լրացում	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է
		2) ընկերություններում ընդունված որոշումների տնտեսական հետևանքների համար պատասխանատվության բարձրացում և ընկերությունների	Առաջարկությունը փոխադարձ համաձայնությամբ, կապված 4)-րդ ենթակետի առաջարկության ընդունման հետ, ներկայացվող	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		արդյունավետության խթանում, Նախագծի 1.2.1 ենթակետը վերահամարակալել 1.2.3:	առջարկությունների ցանկից հանվել է: Առաջին 1 կետի 2–րդ մասը վերահամարակալվել է	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 1-ի 2-րդ մասի 2-րդ ենթակետ	Ամրագրված ‹‹մասնավորեցման ձևերի կիրառումը›› թեզը որևէ կերպ չի կարող որակվել որպես քաղաքականության նպատակ: Մասնավորեցման ձևերը միջոց են քաղաքականության նպատակին հասնելու համար: Այդ պատճառով տվյալ ենթակետը կարիք ունի վերախմբագրման: Օրենքի կողմից հետապնդվող նպատակների համատեքստում վերախմբագրման կարիք ունի նաև նախագծի նշված մասի 3-րդ ենթակետը: Առաջարկվում է նշված	Նախագծի 1.2 մասի 2-րդ և 3-րդ կետերի խմբագրելը առաջրկվող բովանդակությամբ ընդունելի է: Ընդունելի է՝ 1.2 մասի 4 ենթակետը հանել:	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		ենթակետերը վերահամարակալել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 4) մասնավորեցման ենթակա օբյեկտի (ընկերության) արդյունավետ սեփականատիրոջ կամ ներդրողի ընտրությունը՝ վերջինը երաշխավորող և միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող մասնավորեցման ձևերի և գործիքակազմի (մրցույթ, ներդրումային ֆոնդերի ներգրավում, ուղղակի վաճառք և այլն) օգտագործմամբ, 5) երկրի ՀՆԱ-ի ձևավորման մեջ մասնավոր կապիտալի տեսակարար կշռի ավելացում և մասնավորեցման քաղաքականության շարունակականության ապահովում, Հանել նախագծի 1.2.4 ենթակետը, իսկ 1.2.5 ենթակետը		

		վերահամարակալել1.2.6:		
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի հոդված 3-ում շարադրվում են ծրագրով նախատեսվող մասնավորեցման ենթակա գույքի ընտրության սկզբունքները: Մինչդեռ 3.1.1 և 3.1.3 ենթակետերի շարադրանքը, այն է ‹‹մասնավորեցման գործընթացը նախաձեռնելը››, գույքի ընտրության սկզբունք չէ: Նշված հոդվածի կոնտեքստում որպես սկզբունք կարող էր արձանագրվել, օրինակ, պետական ունեցվածքի ոչ արդյունավետ կառավարումը և/կամ ընկերության ոչ մրցունակ լինելու հանգամանքը (գիտաարտադրական և գիտահետազոտական ընկերությունների պարագայում) կամ տվյալ ոլորտում հանրության կարիքների լիարժեք բավարարումը ապահովելու	2-րդ կետով տրված առաջարկությունը ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է :	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		տեսակետից բավարար քանակի մասնավոր ընկերությունների առկայությամբ պայմանավորված պետությանը վերապահված պարտավորությունների կարևորության մակարդակի նվազումը (առողջապահական ոլորտի որոշ ընկերությունների պարագայում): Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի նշված ենթակետերը վերախմբագրել:		
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 8-ի 1-ին մաս	Նախագծի հոդված 8-ի 1-ին մասի առաջին նախադասությունը փակագծից հետո շարադրել հետևյալ կերպ՝ «…կազմում է պետական գույքի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների բովանդակության վերաբերյալ առաջարկ»: Բանն այն է, որ նույն մասի երկրորդ նախադասությամբ	3-րդ կետով տրված առաջարկությունը ընդունելի է , հոդված 8-ի 1-ին մասը խմբագրվել է	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		նախատեսվում է, որ նշված աշխատանքների բովանդակությունը ենթակա է կառավարության հաստատմանը, հետևաբար աշխատանքների բովանդակությունը, դե յուրե, սահմանում է կատավարությունը՝ իր որոշմամբ, այլ ոչ թե լիազոր մարմինը:		
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծում ավելացնել նոր 7-րդ հոդված	Օրենքի նախագծում որևէ նորմ չի ամրագրված այն մասին, որ մասնավորեցված ընկերությունների սեփականատերերը իրավունք չունեն փոխել ընկերության գործունեության հիմնական ուղղությունն ու նրա հանրային նշանակությունը: Այս թեզը հատկապես կարևոր է առողջապահության ոլորտի այն ընկերությունների պարագայում, որոնք կոչված են հանրությանը ապահովել անհրաժեշտ առողջապահական ծառայություններ	5-րդ կետով տրված առաջարկությունը ընդունելի է, նախագծում կատարվել է լրացում նոր 8-րդ հոդվածով:	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		յուրահատուկ հիվանդությունների գծով: Առաջարկվում է նախագծում ավելացնել նոր 7-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ Հոդված 7. Առողջապահական որոշ օբյեկտների (ընկերությունների) մասնավորեցմանը ներկայացվող պահանջները 2. Սույն ծրագրի մաս հանդիսացող հավելված 1-ում ընդգրկված առողջապահական ընկերությունների մասնավորեցումը չի կարող հանգեցնել այդ ընկերությունների գործունեության հիմնական ուղղության կամ հանրային նշանակության փոփոխությանը կամ որևէ կերպ նվազեցնել դրանց գործունեության հանրային օգտակարությունը (այդ թվում, մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մրցունակության		

		ապահովման առումով): 2. Սույն հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջը պարտադիր կերպով ամրագրվում է տվյալ օբյեկտի (ընկերության) մասնավորեցման պայմանագրում, որպես գործարքի շրջանակներում ՀՀ կառավարության և մասնավոր սեփականատիրոջ կամ ներդրողի իրավատնտեսական հարաբերությունների կարգավորման գլխավոր նախապայման: Վերջինս պահպանում է իր իրավական ուժը ընկերության գործունեության ամբողջ ընթացքում՝ անկախ սեփականատիրոջ փոփոխությունից: Այս պահանջը չի կարող կաշկանդել կառավարությանը օբյեկտի (ընկերության) մասնավորեցման ձևերի ընտրության խնդրում, սակայն վերջինը պետք է		

		նպաստի այդ նախապայմանի առավել երաշխավորված ապահովմանը:		
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հիմնավորման մեջ ‹‹Ընթացիկ իրավիճակը և խնդիրները›› բաժին	Նախագծի հիմնավորման մեջ ‹‹Ընթացիկ իրավիճակը և խնդիրները›› բաժնում ամրագրված է, որ ‹‹առողջապահական ոլորտի մի շարք ընկերությունների մասնավորեցումը իրականացվում է առողջապահության ոլորտում ներկայումս իրականացվող քաղաքականությանը համապատասխան››: Մինչդեռ առողջապահության նախարարության կողմից ներկայացված կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության մեջ ընդամենը ասվում է, որ ‹‹ընկերությունների մասնավորեցումը կունենա դրական ազդեցություն բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի, ինչպես նաև դրանց	6-րդ կետով տրված առաջարկության հետ կապված առարկություններ չունենք: Միաժամանակ գտնում ենք, որ ՀՀ առողջապահոության նախարարության հիմնավորումները բավարար են ընկերությունները մասնավորեցման ծրագրում ընդգրկելու համար:	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		մատչելիության բարձրացման առումով›› և ոչ մի տեղեկանք-հիմնավորում ազգաբնակչության շրջանում տվյալ առողջապահական հիմնարկի ծառայությունների պահանջարկված ծավալի, տվյալ ընկերության ոչ մրցունակ լինելու պատճառների (վերլուծություն), ներկայումս հանրապետությունում առկա կարողությունների գնահատականի, մինչ մասնավորեցումը և դրանից հետո դրանց կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության և վերջինիս հնարավոր դինամիկայի, պետպատվերի ծավալների հնարավոր փոփոխությունների մասին, այսինքն հիմնավորումներ, առանց որոնց հնարավոր չէ նմանատիպ (ոլորտից հանրության սպասելիքների բավարարմանը նպաստող) որոշումներ ընդունել: Այլ կերպ ասած, բացակայում է		

		ներկայումս նախարարության կողմից իրականացվող քաղաքականության որևէ առարկայական հիմնավորում (որին հղում է կատարում նախագծի հեղինակը) և որը հնարավորություն կտար ըստ էության գնահատել առաջարկվող քաղաքական որոշման տնտեսական նպատակահարմարությունն ու հանրային օգտակարությունը: Սա շատ լուրջ բացթողում է նաև ԱԺ առաջին նիստում Հանրապետության Նախագահի ուղերձի՝ առողջապահության ոլորտին վերաբերող որոշ դրույթների գործնական կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ համակարգային բնույթի երաշխիքներ ձևավորելու տեսանկյունից: Առաջարկվում է, մինչ Ազգային Ժողովի արտահերթ նիստում օրենքի նախագծի քննարկումը, վերջինիս կից		

		ներկայացնել առողջապահության նախարարության կողմից վերը նշված հիմնավորումներն ու հաշվարքները (որոնք, ենթադրում եմ, գոյություն ունեն և օգտագործվել են առողջապահության նախարարության կողմից մասնավորեցման ենթակա ընկերությունների ընտրությունը հիմնավորելու համար):		
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հիմնավորման ‹‹Տեղեկանք հասարակության մասնակցության մասին›› բաժնի 2-րդ	Օրենքի նախագծի հիմնավորման ‹‹Տեղեկանք հասարակության մասնակցության մասին›› բաժնի 2-րդ՝ ‹‹Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին›› ենթաբաժնում հեղինակը ամրագրում է, որ նման մասնակցության անհրաժեշտություն չի առաջացել: Այս պնդումը առնվազն վիճահարույց է, որովհետև առավել քան	7-րդ կետով տրված դիտողության հետ կապված հայտնում եմ, որ Հանրային քննարկման նպատակով օրենքի նախագծի էլեկտրոնային տարբերակը տեղադրված էր Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am	Առաջարկությունը ամբողջությամբ ընդունվել է

		ակնհայտ է, որ հանրության համար այնպիսի զգայուն ոլորտում, ինչպիսին, օրինակ, առողջապահությունն է, նախապատրաստվում է իրականացնել մի գործընթաց, որի արդյունքներն ուղղակիորեն անդրադարձ են ունենալու հանրության յուրաքանչյուր անդամի կենսական շահերի վրա: Հետևաբար այդ գործընթացը կանոնակարգող օրինագծի նախապատրաստման քննարկումներին ազդեցիկ մասնագիտական ընկերակցություններին և հանրության շահերը հետապնդող հասարակական կազմակերպություններին մասնակից դարձնելու անհրաժեշտություն չի կարող չառաջանալ (հանրային հետաքրքրությունների մասին է վկայում նաև մամուլում խնդրո առարկային վերաբերող բազմաթիվ անդրադարձերը): Ի դեպ այս հարցը ուղղակիորեն	հասցեում: Հակված ենք այն կարծիքին, որ նախագիծը ավելի շատ մասնագիտական քննարկման կարիք ունի, քան հասարակական քննարկման: Նշենք, որ մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների վերաբերյալ հասարակությունը բավարար չափով տեղեկացված է:	

		վերաբերվում է առողջապահության նախարարության պատասխանատվությանը: Առաջարկվում է մինչ օրենքի նախագծի քննարկումների սկիզբը ԱԺ լիագումար նիստում նախաձեռնել քաղաքացիական սեկտորի մասնակցությամբ շահագրգիռ քննարկումներ:		